ՀՀ, 0001 Երևան, Հյուսիսային 1
+374 12 88 88 88
info@ligainsurance.am
ligainsurance.am

«ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ
Խորհրդի կողմից
(22.05.2023թ. Խորհրդի նիստի թիվ 06
արձանագրություն)

ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԽՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ (ԱՊԿԱ) ՊԱՅՄԱՆՆԵՐ

Փաստաթղթի կոդ՝ TC750-01-03
Խմբագրություն՝ 04

ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԽՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ (ԱՊԿԱ) ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության կամավոր ապահովագրության սույն պայմանները (այսուհետ՝ Պայմաններ) մշակված են համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի և համապատասխանում են ՀՀ ԿԲ կողմից տրված ԱՊՈ թիվ 0009 Լիցենզիայի «Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների (նաև՝ բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն» դասին:
Պայմանները հանդիսանում են Պայմանների համաձայն կնքված Ապահովագրության պայմանագրերի անբաժանելի մասը:
Պայմանների համաձայն Ապահովագրության պայմանագիր կնքվում է «ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՓԲԸ-ի հետ գործող ԱՊՊԱ պայմանագիր ունեցող անձի հետ:
Պայմանների հիման վրա կարող են մշակվել ապահովագրական ծրագրեր/պրոդուկտներ (այսուհետ՝ Ծրագիր):

ԳԼՈՒԽ 1. ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ապահովագրող՝ «ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՓԲԸ:
Ապահովադիր՝ Ապահովագրողի հետ Ապահովագրության պայմանագիր կնքած գործունակ ֆիզիկական անձ կամ իրավաբանական անձ, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին, հիմնարկ, ով հանդիսանում է ավտոտրանսպորտային միջոցի սեփականատեր կամ ավտոտրանսպորտային միջոցի օտարման պայմանագրով ձեռք բերող համարվող կողմ կամ ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով վարձակալ կամ ՀՀ տարածք վարելու միջոցով ներմուծվող ավտոտրանսպորտային միջոցները ներմուծող անձ կամ վերջինիս կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով լիազորված անձ:
Ապահովագրված անձ՝ Ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում ավտոտրանսպորտային միջոցի սեփականատեր, ինչպես նաև օրինական հիմքերով այն տիրապետող այլ անձ (ներառյալ՝ վարորդը):
Լիազորված վարորդ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ավտոտրանսպորտային միջոցն օգտագործելու իրավունք ունեցող գործունակ ֆիզիկական անձ, ով որպես լիազորված վարորդ նշված է ԱՊՊԱ պայմանագրում և Ապահովագրության պայմանագրում:
Տուժող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան իրավասու մարմինների կողմից Տուժող ճանաչված անձ, ով ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման հետևանքով կրել է անձնական կամ գույքային վնասներ, իսկ այդ անձի մահվան դեպքում անձինք, ովքեր ՀՀ օրենքներով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով ունեն վնասի հատուցում ստանալու իրավունք:
Ավտոտրանսպորտային միջոց (այսուհետ՝ ԱՄ)՝ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով ուղևորներ և բեռներ փոխադրելու, ինչպես նաև ոչ տրանսպորտային աշխատանքներ կատարելու համար սարքավորված անիվավոր տրանսպորտային միջոց (այդ թվում՝ թեթև մարդատար ավտոմեքենաներ, միկրոավտոբուսներ, բեռնատար ավտոմեքենաներ, քարշակներ, բացառությամբ անհատական և երթուղային տաքսիների):
Ճանապարհատրանսպորտային պատահար (այսուհետ՝ ՃՏՊ)՝ ԱՄ-ի՝ ճանապարհով շարժվելու ընթացքում և դրա մասնակցությամբ առաջացած պատահար, որի հետևանքով զոհվել կամ վիրավորվել են մարդիկ, վնասվել են ԱՄ-ներ, կառույցներ, բեռներ կամ պատճառվել է այլ նյութական վնաս:
Ապահովագրության պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր)՝ Պայմանների համաձայն Ապահովադրի և Ապահովագրողի միջև կնքված Պայմանագիր, որում սահմանված են ցամաքային ԱՄ-ի (նաև՝ բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրության դասով իրականացվող ապահովագրության պայմանները:
Ապահովագրական գումար՝ Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովագրողի կողմից Տուժողին վճարման ենթակա ապահովագրական հատուցման առավելագույն չափն է:
Ապահովագրական սակագին՝ Ապահովագրավճարի դրույքաչափն է ապահովագրական գումարի նկատմամբ, որը սահմանվում է Ապահովագրողի կողմից՝ հաշվի առնելով ապահովագրության օբյեկտը և ապահովագրական ռիսկի բնույթը:
Ապահովագրավճար՝ ապահովագրության դիմաց վճար, որն Ապահովադիրը պարտավոր է վճարել Ապահովագրողին՝ համաձայն Պայմանագրում սահմանված կարգի և ժամկետների:
Ապահովագրավճարի հերթական մասի վճարում՝ ապահովագրավճարի տարաժամկետ վճարում նախատեսող Պայմանագրում նշված ապահովագրավճարի մասերը, որոնց չափերը և վճարման ժամկետները սահմանվում են Ապահովագրողի կողմից Պայմանագրում:
Ոչ պայմանական չհատուցվող գումար՝ վնասի չափ, որը ենթակա չէ հատուցման Ապահովագրողի կողմից և յուրաքանչյուր ապահովագրական պատահարի դեպքում նվազեցվում է փոխհատուցվող վնասից:
Ոչ պայմանական չհատուցվող գումարը հավասար է ԱՊՊԱ օրենսդրությամբ անձնական և գույքային վնասների համար սահմանված ապահովագրական գումարների համապատասխան առավելագույն սահմանաչափերին:
Ապահովագրական ռիսկ՝ ենթադրվող իրադարձություն, որի տեղի ունենալու համար կնքվում է Պայմանագիրը:
Ապահովագրական պատահար՝ տեղի ունեցած իրադարձություն կամ դեպք, որը նախատեսված է Պայմանագրով, որի տեղի ունենալու հիմքում ընկած է պատահականության բնույթը և որի արդյունքում Տուժողին պատճառվել է վնաս, ինչն էլ առաջացրել է Ապահովագրողի՝ Տուժողին ապահովագրական հատուցում վճարելու պարտականությունը:
Ապահովագրական հատուցում՝ ապահովագրական պատահարի արդյունքում Ապահովագրողի կողմից Պայմանագրում նշված ապահովագրական գումարի սահմաններում Տուժողին վճարման ենթակա գումար՝ դրամական արտահայտությամբ կամ համարժեք գույքով կամ վնասված գույքի վերանորոգում:
ԱՄ-ի և/կամ այլ գույքի լրիվ կառուցվածքային ոչնչացում՝ ԱՄ-ի և/կամ այլ գույքի կոնստրուկտիվ ոչնչացումն է, երբ դրա վերանորոգման, վերականգնման արժեքը (ներառյալ՝ Պայմանագրով հատուցման ենթակա ծախսերը) գերազանցում է ԱՄ-ի և/կամ այլ գույքի իրական (շուկայական) արժեքի 80 (ութսուն) տոկոսը ապահովագրական պատահար տեղի ունենալու օրվա դրությամբ:

ԱՊՊԱ՝ ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն:
ԱՊՊԱ պայմանագիր՝ Ապահովագրողի և Ապահովադրի միջև «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի համաձայն կնքված պայմանագիր:

ԳԼՈՒԽ 2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

2.1. Պայմաններով ապահովագրության օբյեկտ են համարվում Ապահովադրի (Ապահովագրված անձի) գույքային շահերը՝ կապված Պայմանագրում նշված ԱՄ-ի օգտագործումից բխող Ապահովադրի (Ապահովագրված անձի) քաղաքացիական պատասխանատվության հետ, որն առաջանում է Պայմանագրում նշված տարածքում տվյալ ԱՄ-ի օգտագործումից Տուժողի առողջությանը և/կամ գույքին պատճառված վնասների հետևանքով:
2.2. Պայմանագրով կարող է ապահովագրվել միայն ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով ուղևորներ փոխադրելու համար սարքավորված անիվավոր տրանսպորտային միջոցների (այդ թվում՝ թեթև մարդատար ավտոմեքենաների, քարշակների) օգտագործումից բխող Ապահովադրի (Ապահովագրված անձի) քաղաքացիական պատասխանատվությունը: Միկրոավտոբուսների, բեռնատար ավտոմեքենաների, անհատական և երթուղային տաքսիների օգտագործումից բխող Ապահովադրի (Ապահովագրված անձի) քաղաքացիական պատասխանատվությունը ապահովագրման ենթակա չէ:

ԳԼՈՒԽ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ

3.1. Պայմանների համաձայն՝ ապահովագրական պատահար է համարվում Ապահովադրի և/կամ Պայմանագրում նշված ԱՄ-ն օրինական հիմքերով տիրապետող այլ անձի (անձանց) կողմից Պայմանների հիման վրա կնքված Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում ՀՀ և ԼՂՀ տարածքում տվյալ ԱՄ-ի օգտագործման հետևանքով տեղի ունեցած ՃՏՊ-ի արդյունքում Տուժողին հետևյալ վնասների պատճառումը՝ պայմանով, որ Տուժողն ԱՊՊԱ օրենսդրության համաձայն տվյալ ՃՏՊ-ի գծով ստացել է հատուցում.
3.1.1. անձնական վնասներ, որոնք ներառում են Տուժողի առողջությանը պատճառված վնասները,
3.1.2. գույքին պատճառված վնասներ, որոնք ներառում են Տուժողի ԱՄ-ի վնասվածքը, ոչնչացումը կամ կորուստը, Տուժողին պատկանող այլ գույքի վնասվածքը, ոչնչացումը կամ կորուստը՝ բացառությամբ Պայմանագրում նշված ԱՄ-ին կամ դրա կցորդին (կիսակցորդին) կցված կամ դրանց մեջ (վրա) գտնվող և Տուժողին սեփականության իրավունքով պատկանող գույքի:
3.2. Պայմանների 3.1. կետով սահմանված վնասներից բացառություն են կազմում՝
3.2.1. անհաղթահարելի ուժի (ֆորս մաժոր) հետևանքով առաջացած պատահարի արդյունքում պատճառված վնասները,
3.2.2. ահաբեկչական, ռազմական գործողությունների, խռովությունների կամ զանգվածային անկարգությունների հետևանքով առաջացած պատահարի արդյունքում պատճառված վնասները,
3.2.3. վտանգավոր թափոնների տեղափոխման ժամանակ պատճառված վնասները, եթե դրանք կապված են բացառապես վտանգավոր թափոնների հետ,
3.2.4. Տուժողի դիտավորության հետևանքով տվյալ Տուժողին պատճառված վնասները,
3.2.5. պետական սեփականություն համարվող բուսական կամ կենդանական աշխարհին, օդին, մակերևութային կամ ստորգետնյա ջրերին, ընդերքին պատճառված վնասները,
3.2.6. անտիկվարային և այլ բացառիկ առարկաներին, պատմամշակութային նշանակության շենքերին և շինություններին, թանկարժեք մետաղներից իրերին, թանկարժեք, կիսաթանկարժեք և արհեստական քարերից իրերին, կանխիկ դրամին, արժեթղթերին, կրոնական պաշտամունքի առարկաներին, ինչպես նաև գիտության, գրականության և արվեստի գործերին, մտավոր սեփականության այլ օբյեկտներին պատճառված վնասները,
3.2.7. բեռների փոխադրման պայմանագրով փոխադրվող բեռներին պատճառված վնասները,
3.2.8. Պայմանագրում նշված ԱՄ-ն բեռնավորելու կամ բեռնաթափելու ժամանակ պատճառված վնասները,
3.2.9. Պայմանագրով նախատեսված այլ վնասները:

ԳԼՈՒԽ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ: ՈՉ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ

4.1. Ապահովագրական գումարը որոշվում է Ապահովադրի և Ապահովագրողի փոխադարձ համաձայնությամբ:
4.2. Պայմանագրում կարող է սահմանվել՝
4.2.1. ոչ ագրեգատային ապահովագրական գումար՝ գումար, որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է վճարել ապահովագրական հատուցում յուրաքանչյուր ապահովագրական պատահարի գծով (անկախ դրանց ծավալից և քանակից), որը տեղի է ունեցել Պայմանագրի գործողության ընթացքում,
4.2.2. ագրեգատային ապահովագրական գումար՝ գումար, որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է վճարել ապահովագրական հատուցում բոլոր ապահովագրական պատահարների գծով, որոնք տեղի են ունեցել Պայմանագրի գործողության ընթացքում: Ընդ որում՝ ապահովագրական գումարը նվազեցվում է վճարված ապահովագրական հատուցման չափով:
4.3. Եթե Պայմանների և Պայմանագրի համաձայն՝ հատուցման ենթակա գույքին պատճառված վնասներ են կրել մեկից ավելի անձինք, և այդ վնասների ընդհանուր գումարը գերազանցում է ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի սահմանված ապահովագրական գումարը, ապա այդ անձանցից յուրաքանչյուրին ապահովագրական հատուցումները վճարվում են վնասների ընդհանուր գումարում նրանց գույքին պատճառված վնասների չափերին համամասնորեն՝ ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի՝ Պայմանագրում սահմանված ապահովագրական գումարի սահմաններում:
4.4. Եթե Պայմանների և Պայմանագրի համաձայն՝ հատուցման ենթակա անձնական վնասներ են կրել մեկից ավելի անձինք, և այդ վնասների ընդհանուր գումարը գերազանցում է ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի սահմանված ապահովագրական գումարը, ապա նրանցից յուրաքանչյուրին ապահովագրական հատուցումները վճարվում են վնասների ընդհանուր գումարում նրանց պատճառված անձնական վնասների չափերին համամասնորեն՝ ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի սահմանված ապահովագրական գումարի սահմաններում: Սույն կետի համաձայն հաշվարկված՝ յուրաքանչյուր Տուժողին վճարման ենթակա գումարը չի կարող գերազանցել ըստ յուրաքանչյուր Տուժողի սահմանված ապահովագրական գումարը: Այն դեպքում, երբ Տուժողներից մեկի (մի քանիսի) համար, սույն

կետի համաձայն, համամասնորեն հաշվարկված գումարը (գումարներից յուրաքանչյուրը) գերազանցում է ըստ յուրաքանչյուր Տուժողի սահմանված ապահովագրական գումարը, ապա գերազանցող մասով (մասերով) հատուցվում են մյուս Տուժողներին պատճառված վնասները՝ այդ վնասներին համամասնորեն՝ ըստ յուրաքանչյուր Տուժողի՝ Պայմանագրում սահմանված ապահովագրական գումարի սահմաններում:
4.5. Պայմանագրով կարող է նախատեսվել ոչ պայմանական չհատուցվող գումար:

ԳԼՈՒԽ 5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ, ԿԱՏԱՐՈՒՄԸ, ԴՐԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ, ԴՐԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5.1. Պայմանների հիման վրա կնքված Պայմանագրի համաձայն՝ Ապահովագրողը պարտավորվում է Պայմանագրում սահմանված վճարի (ապահովագրավճարի) դիմաց, Պայմանագրում նախատեսված ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Տուժողին վճարել ապահովագրական հատուցում՝ Պայմանագրում սահմանված ապահովագրական գումարի սահմաններում:
5.2. Պայմանագիրը կնքվում է Ապահովագրողի կողմից գրավոր ձևով՝ Ապահովադրի բանավոր կամ գրավոր դիմումի հիման վրա:
5.3. Պայմանագիրը կնքելիս՝ Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողին հայտնել ապահովագրական ռիսկի գնահատման համար էական նշանակություն ունեցող իրեն հայտնի բոլոր հանգամանքների մասին:
5.4. Պայմանագիրը կնքելիս՝ Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողին ներկայացնել հետևյալ փաստաթղթերի պատճենները, իսկ Ապահովագրողի պահանջով նաև դրանց բնօրինակները.
ա) անձնագիր, զինվորական գրքույկ, սոցիալական ապահովության քարտ (սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանք), անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման վկայական (եթե Ապահովադիրը հանդիսանում է ֆիզիկական անձ և/կամ անհատ ձեռնարկատեր) կամ պետական գրանցման վկայական (եթե Ապահովադիրը հանդիսանում է իրավաբանական անձ),
բ) ԱՄ-ի տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիրը և ԱՄ տիրապետման, օգտագործման, տնօրինման իրավունքը հաստատող այլ փաստաթղթեր (ԱՄ-ի տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական, նոտարական վավերացված լիազորագիր, վարձակալության պայմանագիր և այլն),
գ) Ապահովագրողի պահանջով այլ փաստաթղթեր:
5.5. Ապահովագրության ժամկետը սահմանվում է Պայմանագրում կողմերի համաձայնությամբ:
5.6. Ցանկացած դեպքում ապահովագրության գործողությունը չի կարող սկսվել ավելի շուտ, քան Պայմանագրի կնքման ամսաթիվ հանդիսացող օրվան հաջորդող օրվա ժամը 00:00-ն:
Ապահովագրության պայմանագրի գործողությունն ավարտվում է ԱՊՊԱ պայմանագրի գործողության ավարտի/դադարեցման պահից, եթե Պայմանագրով կամ ՀՀ օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:
5.7. Պայմանագիրը գործում է ՀՀ և ԼՂՀ տարածքում, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
5.8. Պայմանագիրը կնքելիս Ապահովադիրը և Ապահովագրողը կարող են փոխադարձ համաձայնության գալ լրացուցիչ պայմանների և դրույթների ներառման, որոշակի ռիսկերի բացառման վերաբերյալ, ինչի մասին Պայմանագրում կատարվում է համապատասխան գրառում:
5.9. Պայմանագրի գործողությունը դադարում է՝
5.9.1. Պայմանագրի «Ապահովագրության ժամկետը» դաշտում նշված ավարտի ժամկետը լրանալու պահից,
5.9.2. Ապահովագրողի կողմից Պայմանագրի գծով Ապահովադրի նկատմամբ ունեցած բոլոր պարտավորությունները կատարելու դեպքում,
5.9.3. ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:
5.10. Պայմանագիրը վաղաժամկետ դադարում է հետևյալ դեպքերում՝
5.10.1. Պայմանագրում նշված ԱՄ-ն հանվել է պետական հաշվառումից և վերջինիս հաշվառման համարանիշը հանձնվել է ի պահ,
5.10.2. Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո վերացել է ապահովագրական պատահարի վրա հասնելու հնարավորությունը և ապահովագրական ռիսկի գոյությունը դադարել է ապահովագրական պատահարից տարբեր այլ հանգամանքների բերումով,
5.10.3. Ապահովադրի պահանջով՝ ցանկացած ժամանակ, բայց ոչ շուտ, քան Ապահովադրի կողմից համապատասխան մտադրության մասին Ապահովագրողին ծանուցելու օրվանից 15 (տասնհինգ) օր հետո,
5.10.4. Ապահովադրի և Ապահովագրողի փոխադարձ համաձայնությամբ և պայմանավորված ժամկետներում,
5.10.5. Ապահովագրողի հետ կնքած ԱՊՊԱ պայմանագիրն Ապահովադրի նախաձեռնությամբ դադարեցնելու պահից,
5.10.6. ՀՀ իրավասու պետական մարմնի կողմից Պայմանագրում նշված ԱՄ-ի նկատմամբ սեփականության իրավունքը գրանցվել է Ապահովադրից տարբեր անձի անունով, բացառությամբ եթե Ապահովադիրը ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով տվյալ ԱՄ-ի վարձակալն է: Եթե Ապահովադիրը ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով տվյալ ԱՄ-ի վարձակալն է, ապա Պայմանագիրը վաղաժամկետ դադարում է այն դեպքում, եթե դադարել է ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագիրը և տվյալ ԱՄ-ի նկատմամբ սեփականության իրավունքը չի գրանցվել Ապահովադրի անունով կամ գրանցվելուց հետո օտարվել է այլ անձի,
5.10.7. ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում և կարգով:
5.11. Պայմանների 5.10.1. և 5.10.2. ենթակետերով նախատեսված դեպքերում Պայմանագիրը վաղաժամկետ դադարում է համապատասխան հիմքն ի հայտ գալու պահին և Ապահովագրողն Ապահովադրին վերադարձնում է Պայմանագրի գործողության չլրացած ժամկետի համար վճարված ապահովագրավճարները, ընդ որում՝ Պայմանագրի գործողության չլրացած ժամկետը հաշվարկվում է Ապահովադրի կողմից Ապահովագրողին գրավոր դիմում ներկայացնելու օրվանից սկսած, սակայն համապատասխան հիմքն ի հայտ գալու օրվանից ոչ շուտ:
5.12. Պայմանների 5.10.3., 5.10.5. և 5.10.6. ենթակետերով նախատեսված դեպքերում ապահովագրավճարի վերադարձ չի նախատեսվում:
5.13. Պայմանների 5.10.4. ենթակետով նախատեսված դեպքերում Ապահովագրողի կողմից Ապահովադրին վերադարձվում են Պայմանագրի գործողության չլրացած ժամկետի համար վճարված ապահովագրավճարները, իսկ հաշվարկներն իրականացվում են Պայմանագրի վաղաժամկետ դադարման օրվա դրությամբ:
5.14. Ապահովադրի և Ապահովագրողի փոխադարձ համաձայնությամբ կարող են սահմանվել դադարեցման գծով վերադարձվող ապահովագրավճարի հաշվարկի այլ սկզբունքներ:

5.15. Պայմանների 5.11., 5.12., 5.13. կետերով նախատեսված դեպքերում ապահովագրավճարները վերադարձվում են ՀՀ դրամով, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

ԳԼՈՒԽ 6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱԿԱԳԻՆ: ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԸ ՉՎՃԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

6.1. Ապահովագրական սակագնի կոնկրետ չափը սահմանվում է Ապահովագրողի կողմից՝ ելնելով ապահովագրական գումարի, ոչ պայմանական չհատուցվող գումարի մեծություններից, ապահովագրության ժամկետից, ապահովագրավճարի վճարման կարգից և այլ գործոններից, որոնք ազդում են ապահովագրական ռիսկի աստիճանի վրա:
6.2. Ապահովագրավճարը Ապահովադրի (Ապահովադրի լիազորված անձի) կողմից վճարվում է Պայմանագրում նշված չափով, ժամկետներում և ՀՀ դրամով, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
6.3. Պայմանագրով սահմանված ապահովագրավճարի վճարումը Ապահովադրի կողմից կարող է կատարվել՝
6.3.1. կանխիկ կերպով՝ Ապահովագրողի դրամարկղ մուտքագրելու կամ Ապահովագրողի ներկայացուցչին կամ ապահովագրական գործակալին վճարելու միջոցով,
6.3.2. անկանխիկ կերպով՝ Պայմանագրում կամ Ապահովագրողի կողմից ներկայացված վճարման հաշվում նշված բանկային հաշվին ապահովագրավճարը փոխանցելու միջոցով:
6.4. Ապահովադրի և Ապահովագրողի փոխադարձ համաձայնությամբ Պայմանագրով կարող են սահմանվել ապահովագրավճարի վճարման հետևյալ եղանակներից որևէ մեկը՝
6.4.1. միանվագ վճարում, որի դեպքում ապահովագրավճարը վճարվում է Ապահովադրի կողմից միանվագ կերպով՝ Ապահովագրողի և Ապահովադրի միջև Պայմանագրով պայմանավորված ժամկետում,
6.4.2. տարաժամկետ վճարում, որի դեպքում ապահովագրավճարը վճարվում է մաս-մաս՝ Ապահովագրողի և Ապահովադրի միջև Պայմանագրով պայմանավորված ժամկետներում:
6.5. Պայմանագրով սահմանված ժամկետում և չափով Ապահովադրի կողմից ապահովագրավճարը (ապահովագրավճարի հերթական մասը) չվճարելու դեպքում Ապահովագրողն իրավունք ունի չսահմանել լրացուցիչ ժամկետ ապահովագրավճարի վճարման համար, չծանուցել այդ մասին Ապահովադրին: Ապահովագրավճարի վճարման համար լրացուցիչ ժամկետ չսահմանելու և այդ մասին Ապահովադրին չծանուցելու դեպքում Ապահովագրողն իրավունք ունի չվճարել Պայմանագրով սահմանված ապահովագրավճարի հերթական մասի վճարման ամսաթիվ հանդիսացող օրվան հաջորդող օրվա ժամը 00:00-ից հետո տեղի ունեցած իրադարձությունների հետևանքով առաջացած վնասների դիմաց ապահովագրական հատուցումներ:

ԳԼՈՒԽ 7. ԿՈՂՄԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ

7.1. Ապահովադիրը և/կամ Պայմանագրում նշված ԱՄ-ն օրինական հիմքով տիրապետող այլ անձը ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձություն տեղի ունենալու դեպքում պարտավոր է՝
7.1.1. ողջամիտ և մատչելի միջոցներ ձեռնարկել պատահարի հետևանքով հնարավոր վնասները նվազեցնելու համար: Ապահովադիրը (Պայմանագրում նշված ԱՄ-ն օրինական հիմքով տիրապետող այլ անձը) նման միջոցներ կիրառելիս պետք է հետևի Ապահովագրողի ներկայացուցչի կողմից հեռախոսով Ապահովադրին (Պայմանագրում նշված ԱՄ-ն օրինական հիմքով տիրապետող այլ անձին) տրված ցուցումներին: Հատուցման ենթակա վնասները նվազեցնելու նպատակով Ապահովադրի (Պայմանագրում նշված ԱՄ-ն օրինական հիմքով տիրապետող այլ անձի) կողմից կատարված ծախսերը, եթե այդպիսիք անհրաժեշտ են եղել կամ կատարվել են Ապահովագրողի ներկայացուցչի ցուցումներին համապատասխան, հատուցվում են Ապահովագրողի կողմից նույնիսկ այն դեպքում, երբ համապատասխան միջոցներն արդյունավետ չեն եղել: Նման ծախսերը հատուցվում են անկախ այն բանից, որ դրանք այլ վնասների հատուցման հետ մեկտեղ կարող են գերազանցել Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը,
7.1.2. չլքել ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության վայրը, սպասել Ապահովագրողի ներկայացուցչին (եթե Ապահովագրողն Ապահովադրին տեղեկացրել է, որ իր ներկայացուցիչը ժամանելու է դեպքի վայր) և չտեղաշարժել Պայմանագրում նշված ԱՄ-ն կամ ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության հետ կապ ունեցող առարկաները մինչև Ապահովագրողի ներկայացուցչի, իսկ Ապահովագրողի ներկայացուցչի պահանջով՝ նաև ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու պետական մարմինների աշխատակիցների ժամանումը և ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության փաստով բոլոր անհրաժեշտ տեղեկատվության արձանագրումը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ՝

- տեղաշարժերը պայմանավորված են եղել մարդկանց անվտանգությունն ապահովելու նկատառումներով,
- տեղաշարժերը պայմանավորված են եղել ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու պետական մարմինների աշխատակիցների ցուցումներով:

Ապահովադիրը (Պայմանագրում նշված ԱՄ-ն օրինական հիմքով տիրապետող այլ անձը) կարող է չսպասել Ապահովագրողի ներկայացուցչի ժամանելուն, եթե վերջինս չի ժամանել պատահարի վայր 7.2.2. ենթակետում նշված ժամկետում կամ հեռախոսով հայտնել է պատահարի վայր իր չժամանելու մասին և համապատասխան հետագա ցուցումներ է տվել Ապահովադրին (Պայմանագրում նշված ԱՄ-ն օրինական հիմքով տիրապետող այլ անձին) և Տուժողին (Տուժողներին),
7.1.3. համապատասխան պահանջի առկայության դեպքում ներկա գտնվել և մասնակցել պատահարի գրանցման և քննության պետական մարմինների և Ապահովագրողի՝ իրեն վերաբերող գործընթացներին,
7.1.4. Ապահովագրողի պահանջով տրամադրել ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության պահին Պայմանագրում նշված ԱՄ-ի վարորդի վարորդական իրավունքի վկայականը և տվյալ ԱՄ-ի տեխնիկական զննությունն անցած լինելու փաստը հավաստող փաստաթղթեր,
7.1.5. Ապահովագրողի պահանջով ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձությունից անմիջապես հետո անցնել ալկոհոլի կամ թմրանյութերի կամ հոգեմետ նյութերի օտագործման փաստի վերաբերյալ քննություն,

7.1.6. ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձությունից հետո Ապահովագրողի ներկայացուցչին և/կամ փորձագետին տրամադրել Պայմանագրում նշված ԱՄ-ի զննում անցկացնելու հնարավորություն,

7.1.7. մինչև ապահովագրական հատուցման գործընթացի վերջնական կարգավորումը կամ փորձաքննության արդյունքների վերաբերյալ իր և/կամ ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության մյուս մասնակցի (մասնակիցների) համաձայնության ձեռքբերումը առանց Ապահովագրողի համաձայնության չիրականացնել Պայմանագրում նշված և վթարված ԱՄ-ի կամ ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության արդյունքում վնասված այլ գույքի վերանորոգման աշխատանքներ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք պայմանավորված են վարորդի կամ ուղևորի անվտանգության ապահովման անհրաժեշտությամբ կամ իրավասու պետական մարմինների ցուցումով կամ հրահանգով: Նման դեպքերում Ապահովադիրը և/կամ Պայմանագրում նշված ԱՄ-ն տիրապետող այլ անձը պարտավոր է վթարված ԱՄ-ի կամ պատահարի արդյունքում վնասված այլ գույքի վերանորոգման աշխատանքներն սկսելուց առնվազն մեկ օր առաջ գրավոր տեղեկացնել այդ մասին Ապահովագրողին (Ապահովագրողի ներկայացուցչին կամ ապահովագրական գործակալին),

7.1.8. առանց Ապահովագրողի համապատասխան փորձաքննության արդյունքների կամ համաձայնության չընդունել մեղավորությունը և/կամ չստանձնել պարտավորություններ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ իրադարձության հետ կապված հարուցվել է քաղաքացիական, քրեական կամ դատական կարգով վարչական գործ,

7.1.9. տեղեկանալուց հետո անհապաղ Ապահովագրողին տեղեկացնել իրադարձությունը տեղի ունենալու կամ դրա արդյունքում պատճառված վնասների առթիվ քաղաքացիական, քրեական կամ դատական կարգով վարչական գործ հարուցվելու վերաբերյալ և ներկայացնել նման գործ հարուցված լինելը ապացուցող փաստաթղթեր,

7.1.10. ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության մյուս մասնակցին (մասնակիցներին) տրամադրել ապահովագրական հատուցում ստանալու համար անհրաժեշտ բոլոր տվյալները, մասնավորապես իր անունը, ազգանունը, բնակության վայրը, Պայմանագրում նշված ԱՄ-ի սեփականատիրոջ անունը և ազգանունը (անվանումը), բնակության (գտնվելու) վայրը (եթե Ապահովադիրը (Պայմանագրում նշված ԱՄ-ն օրինական հիմքով տիրապետող այլ անձը) չի հանդիսանում տվյալ ԱՄ-ի սեփականատեր), Ապահովագրողի անվանումը, հասցեն, Պայմանագրի համարը և Պայմանագրում նշված ԱՄ-ի վերաբերյալ այլ տվյալներ,

7.1.11. Տուժողին (Տուժողներին) տեղեկացնել, որ ապահովագրական հատուցում ստանալու համար անհրաժեշտ է պահպանել 7.1. կետի 7.1.2., 7.1.3., 7.1.6., 7.1.10., 7.1.12. ենթակետերով սահմանված պահանջները,

7.1.12. Ապահովագրողին տրամադրել ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության վերաբերյալ իրեն հայտնի և իր տրամադրության տակ առկա բոլոր տեղեկությունները և փաստաթղթերը,

7.2. Ապահովագրողը պարտավոր է՝

7.2.1. ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության մասին Ապահովադրի և/կամ Պայմանագրում նշված ԱՄ-ն օրինական հիմքով տիրապետող այլ անձի կողմից իրեն տեղեկացման դեպքում, անհրաժեշտ հանգամանքները ճշտելուց հետո, Ապահովադրին և/կամ Պայմանագրում նշված ԱՄ-ն օրինական հիմքով տիրապետող այլ անձին տեղեկացնել պատահարի վայր ժամանելու կամ չժամանելու իր մտադրության մասին,

7.2.2. ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության վայր ժամանելու իր մտադրությունը Ապահովադրին և/կամ Պայմանագրում նշված ԱՄ-ն օրինական հիմքով տիրապետող այլ անձին հայտնելու դեպքում ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության վայրում ապահովել իր ներկայացուցչի (ներկայացուցիչների) ժամանումը պատահարի վերաբերյալ ստացված հեռախոսազանգի պահից՝ Երևան քաղաքում և ՀՀ մարզկենտրոններում 35 րոպեի, իսկ դրանցից դուրս՝ 80 րոպեի ընթացքում,

7.2.3. ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության մասին իրեն տեղեկացնելուց հետո կատարել կամ կազմակերպել պատահարի արդյունքում Պայմանագրում նշված և վնասված ԱՄ-ի և/կամ գույքի զննություն պատճառված վնասի չափը ճշտելու նպատակով զննման հնարավորություն ստանալուց հետո առավելագույնը 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում:

ԳԼՈՒԽ 8. ՎՆԱՍՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

8.1. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

8.1.1. Ապահովադիրը պարտավոր է ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձություն տեղի ունենալու և Տուժողի կողմից տվյալ ՃՏՊ-ի գծով ԱՊՊԱ օրենսդրության համաձայն հատուցում ստանալու օրվանից սկսած ոչ ուշ, քան 30 (երեսուն) օրվա ընթացքում գրավոր դիմել և սույն գլխով նախատեսված փաստաթղթերը ներկայացնել Ապահովագրողին՝ Տուժողին կամ նրա իրավահաջորդին ապահովագրական հատուցում վճարելու պահանջով: Ապահովադիրը պետք է Ապահովագրողին տրամադրի հնարավորինս ամբողջական տեղեկատվություն, որը հայտնի է իրեն դիմելու պահի դրությամբ (ապահովագրական պատահարի տեղի ունենալու օրը և ժամը, վայրը, պատահարի առաջացման հանգամանքները և այլն): Սույն կետում նշված պարտավորությունները կարող է ստանձնել նաև Տուժողը կամ նրա իրավահաջորդը:

8.1.2. Եթե Ապահովադիրը (Տուժողը/Տուժողի իրավահաջորդը) Պայմանների 8.1.1. ենթակետով սահմանված 30 (երեսուն) օրվա ընթացքում գրավոր չի դիմում և սույն գլխով նախատեսված փաստաթղթեր չի ներկայացնում պատահարի հետևանքով անգիտակից վիճակում կամ այնպիսի իրավիճակում լինելու պատճառով, որն անհնարին է դարձրել Ապահովադրի (Տուժողի/Տուժողի իրավահաջորդի) կողմից Ապահովագրողին սահմանված ժամկետում և կարգով Տուժողին կամ նրա իրավահաջորդին ապահովագրական հատուցում վճարելու համար դիմումը և սույն գլխով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելը կամ գույքին պատճառված վնասների առկայության դեպքում այդ գույքի պահպանման համար պատասխանատու անձի (գույքը նրա մոտ գտնվել է այն պահպանելու, օգտագործելու կամ նրա համաձայնությամբ այլ նպատակներով) կողմից պատահարի մասին չտեղեկացնելու պատճառով, ապա նրա համար երեսունօրյա ժամկետը սկսում է գործել ապահովագրական հատուցում ստանալու համար դիմում և սույն գլխով նախատեսված փաստաթղթեր ներկայացնելն անհնարին դարձնող հանգամանքների վերացման կամ ապահովագրական պատահարի մասին տեղեկանալու օրվանից սկսած: Ապահովադիրը (Տուժողը/Տուժողի իրավահաջորդը) կրում են Տուժողին կամ նրա իրավահաջորդին ապահովագրական հատուցում վճարելու համար սահմանված ժամկետում

գրավոր դիմելու և սույն գլխով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհնարինության կամ տեղյակ չլինելու ապացուցման պարտականությունը:

8.1.3. Տուժողի կամ նրա իրավահաջորդի կողմից ապահովագրական հատուցում ստանալու համար, Ապահովադիրը (Տուժողը/Տուժողի իրավահաջորդը) Ապահովագրողին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

ա) ապահովագրական հատուցում ստանալու համար դիմում, որը պետք է լինի հիմնավորված և պատճառաբանված,

բ) դիմում Պայմանների 8.1.1. ենթակետով նախատեսված ժամկետներում չներկայացվելու դեպքում Ապահովադրի (Տուժողի/Տուժողի իրավահաջորդի) կողմից 30 (երեսուն) օրվա ընթացքում գրավոր դիմելու և սույն գլխով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհնարինության կամ տեղյակ չլինելու հանգամանքները հիմնավորող փաստաթղթեր կամ այլ ապացույցներ,

գ) ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու լիազոր մարմնի կազմած արձանագրությունը (արձանագրություն կազմված լինելու դեպքում),

դ) Տուժողի իրավահաջորդությունը հիմնավորող օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր, եթե Ապահովագրողին դիմել է Տուժողի իրավահաջորդը,

ե) ներկայացուցչի միջոցով դիմում ներկայացվելու դեպքում՝ լիազորված լինելու փաստը հավաստող նոտարական կարգով վավերացված (ֆիզիկական անձի դեպքում) կամ իրավաբանական անձի կողմից պատշաճ հաստատված փաստաթուղթ (իրավաբանական անձի դեպքում),

զ) 8.1.3.1. և/կամ 8.1.3.2. ենթակետերով նախատեսված փաստաթղթերը և այլ ապացույցները՝ կախված պատճառված վնասի բնույթից:

8.1.3.1. Տուժողի առողջությանը պատճառված վնասների հատուցման համար ներկայացվում են՝

ա) դատաբժշկական (բժշկական) փորձաքննության ակտ (եզրակացություն) և/կամ բժշկական տեղեկանք և/կամ կոնսուլտացիոն եզրակացություն և/կամ քաղվածք ամբուլատոր քարտից և/կամ էպիկրիզ,

բ) բժշկական հաստատությունների կողմից տրված վճարման հաշիվներ, իսկ Պայմանների 8.3.4. ենթակետով նախատեսված դեպքերում՝ կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթեր,

գ) 8.1.3.1. ենթակետի ա) և բ) կետերում նշված փաստաթղթերի բացակայության դեպքում՝ վնասի չափը և Ապահովադրի և/կամ Պայմանագրում նշված ԱՄ-ն օրինական հիմքով տիրապետող այլ անձի մեղավորությունը հավաստող այլ փաստաթղթեր,

դ) Ապահովագրողի պահանջով այլ լրացուցիչ փաստաթղթեր:

8.1.3.2. Տուժողի գույքին պատճառված վնասների հատուցման պահանջ ներկայացվելու դեպքում ներկայացվում են՝

ա) Տուժողի ԱՄ-ի, ինչպես նաև այլ գույքի վնասման (ոչնչացման) դեպքում՝ վնասվածքի վերականգնման հետևանքով առաջացած ծախսերը հիմնավորող փաստաթղթեր, եթե Ապահովագրողը չի իրականացրել պատահարի արդյունքում Տուժողի վնասված ԱՄ-ի կամ գույքի զննություն՝ պատճառված վնասի չափը ճշտելու նպատակով,

բ) Տուժողի ԱՄ-ի, ինչպես նաև այլ գույքի կորստի դեպքում՝ կորստի փաստը հավաստող փաստաթղթեր,

գ) 8.1.3.2. ենթակետի ա) և բ) կետերում նշված փաստաթղթերի բացակայության դեպքում՝ վնասի չափը և Ապահովադրի և/կամ Պայմանագրում նշված ԱՄ-ն օրինական հիմքով տիրապետող այլ անձի մեղավորությունը հավաստող այլ փաստաթղթեր,

դ) Ապահովագրողի պահանջով՝ վնասված ԱՄ-ի և/կամ այլ գույքի նկատմամբ Տուժողի սեփականության իրավունքը հաստատող փաստաթուղթ (տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական և այլն),

ե) Ապահովագրողի պահանջով այլ լրացուցիչ փաստաթղթեր:

8.1.4. Եթե Տուժողի կամ նրա իրավահաջորդի կողմից ապահովագրական հատուցում ստանալու համար Ապահովադիրը (Տուժողը/Տուժողի իրավահաջորդը) Ապահովագրողին գրավոր դիմում է և դիմելու պահին առկա է գործն ըստ էության լուծող և օրինական ուժի մեջ մտած դատական ակտ, ապա Պայմանների 8.1.3. ենթակետով սահմանված փաստաթղթերի փոխարեն ներկայացվում են միայն Տուժողի կամ նրա իրավահաջորդի կողմից ապահովագրական հատուցում ստանալու համար Ապահովադրի (Տուժողի/Տուժողի իրավահաջորդի) գրավոր դիմումը և գործն ըստ էության լուծող և օրինական ուժի մեջ մտած դատական ակտը, ինչպես նաև անձը հաստատող փաստաթուղթը: Այս դեպքում Ապահովագրողը կարող է նույնպես պահանջել այլ լրացուցիչ փաստաթղթեր, եթե դատական ակտը չի արտացոլում հատուցում ստանալու համար անհրաժեշտ տեղեկությունները:

8.1.5. Ապահովագրական հատուցում ստանալու համար սույն գլխով նախատեսված փաստաթղթերը ներկայացվում են պատճենահանված վիճակում՝ բացառությամբ այն փաստաթղթերի, որոնք Ապահովագրողի պահանջով պետք է ներկայացվեն բնօրինակով:

8.1.6. Ապահովագրողն իրավունք ունի կրճատել ապահովագրական հատուցում ստանալու համար սույն գլխով նախատեսված փաստաթղթերի ցանկը, եթե դրանց բացակայությունը չի ազդում Ապահովագրողի հնարավորության վրա սահմանելու պատճառված վնասի առաջացման հանգամանքները և/կամ դրա չափը կամ պահանջել ներկայացնել լրացուցիչ փաստաթղթեր, եթե հանգամանքների բերումով դրանց բացակայությունն ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստի սահմանումը և/կամ վնասի չափի որոշումը դարձնում է անհնար:

8.1.7. Համաձայն Պայմանների՝ ապահովագրական պատահարի ժամանակ Տուժող չեն համարվում և ապահովագրական հատուցում ստանալու իրավունքից չեն օգտվում՝

ա) Պայմանագրում նշված ԱՄ-ի սեփականատերը, Ապահովադիրը և վնասը պատճառած անձը,

բ) այն անձինք, որոնք գտնվել են հափշտակված կամ առանց հափշտակության նպատակի ապօրինաբար տիրացած Պայմանագրում նշված ԱՄ-ի մեջ,

գ) Պայմանագրում նշված ԱՄ-ի սեփականատիրոջ կամ օրինական հիմքով այն տիրապետող այլ անձի ընտանիքի անդամները, գույքին պատճառված վնասների մասով: Սույն ենթակետի համաձայն՝ ընտանիքի անդամներ են Պայմանագրում նշված ԱՄ-ի սեփականատիրոջ կամ օրինական հիմքով այն տիրապետող այլ անձի ծնողները, ամուսինը, երեխաները, քույրը և եղբայրը, վերջիններիս ամուսիններն ու երեխաները,

դ) Պայմանագրում նշված ԱՄ-ի սեփականատիրոջ կամ օրինական հիմքով այն տիրապետող այլ անձի աշխատակիցները (եթե Ապահովադիրը հանդիսանում է իրավաբանական անձ):

8.2. ՎՆԱՍԻ ՉԱՓԸ ՈՐՈՇԵԼՈՒ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ՎՃԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

8.2.1. Տուժողի/Տուժողի իրավահաջորդի կողմից տվյալ ՃՏՊ-ի հետևանքով ԱՊՊԱ օրենսդրության համաձայն ապահովագրական հատուցում ստանալու, ինչպես նաև գրավոր դիմումը և սույն գլխով նախատեսված փաստաթղթերը Պայմաններով սահմանված ժամկետում ներկայայացնելու օրվանից հետո՝ 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում, Ապահովագրողն ընդունում է որոշում՝ ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձությունն ապահովագրական պատահար ճանաչելու կամ չճանաչելու վերաբերյալ, ինչպես նաև ապահովագրական հատուցում իրականացնելու, հատուցումը նվազեցնելու կամ ապահովագրական հատուցումը մերժելու մասին: Ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձությունն ապահովագրական պատահար ճանաչելու վերաբերյալ որոշում ընդունելու դեպքում Ապահովագրողը վճարում է ապահովագրական հատուցում համապատասխան որոշումն ընդունելու օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում, իսկ հատուցումը մերժելու կամ հատուցման չափը նվազեցնելու դեպքում՝ կայացված պատճառաբանված որոշումը մշտական բնակության վայրի հասցեով՝ պատվիրված նամակով, կամ առձեռն որոշումը կայացնելու օրվանից 5 (հինգ) օրացուցային օրվա ընթացքում առաքում է Ապահովադրին, Ապահովագրված անձին և Տուժողին (նրա իրավահաջորդին):

8.2.2. Ապահովագրողն իրավունք ունի հետաձգել ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձությունը որպես ապահովագրական պատահար ճանաչելու կամ չճանաչելու մասին որոշման կայացումը, եթե.

ա) առաջացել է ներկայացված փաստաթղթերն ստուգելու, իրավասու մարմիններին լրացուցիչ հարցումներ ուղարկելու անհրաժեշտություն,

բ) ապահովագրության օբյեկտի ոչնչացման, վնասման կամ կորստի կամ Տուժողի առողջությանը և/կամ գույքին վնաս պատճառելու հարցով հարուցվել է քրեական գործ՝ մինչև ապահովագրական պատահարի հանգամանքների և/կամ պատճառի և/կամ վնասի չափի վերաբերյալ տեղեկություններ պարունակող փաստաթղթերի ստացումը և դրանց ստուգումը:

8.2.3. Ապահովագրողն իրավունք ունի մերժել ապահովագրական հատուցման վճարումը հետևյալ հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում.

ա) Տուժող անձը կամ նրա իրավահաջորդը արդեն իսկ հատուցում է ստացել վնասը պատճառած անձից՝ բացառությամբ այն դեպքերի, երբ վնաս պատճառած անձի կողմից հատուցումը ստացվել է չհատուցվող գումարի և/կամ Պայմանագրում նշված ապահովագրական գումարը գերազանցող գումարի գծով,

բ) Ապահովադրի (Տուժողի/Տուժողի իրավահաջորդի) կողմից խախտվել են Տուժողի կամ նրա իրավահաջորդի կողմից Պայմաններով սահմանված ապահովագրական հատուցում ստանալու համար Ապահովագրողին դիմելու և սույն գլխով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու ժամկետները և չի հիմնավորվել Պայմանների 8.1.2. ենթակետում նշված հանգամանքների առկայությունը,

գ) Ապահովադիրը (Տուժողը/Տուժողի իրավահաջորդը) ոչ ուշ, քան Պայմանների 8.1.4. ենթակետի համաձայն փաստաթղթերի ցանկը ստանալուց հետո 30 (երեսուն) օրվա ընթացքում չի ներկայացրել պահանջվող բոլոր փաստաթղթերը, կամ ներկայացված փաստաթղթերում առկա են կեղծ, անարժանահավատ կամ թերի տեղեկություններ,

դ) ապահովագրական պատահարի պահին Պայմանագրում նշված ԱՄ-ի վարորդը գտնվել է ալկոհոլի, թմրանյութերի կամ հոգեմետ նյութերի ազդեցության ներքո,

ե) Տուժողին վնաս է պատճառվել Պայմանագրում նշված ԱՄ-ն մրցույթներում, փորձարկումներում, ուսումնական նկատառումներով, ինչպես նաև որոշակի վճարի դիմաց ուղևորներ և/կամ բեռներ տեղափոխելու նպատակով օգտագործելու արդյունքում,

զ) Տուժողին վնաս է պատճառվել միկրոավտոբուսների, բեռնատար ավտոմեքենաների օգտագործման արդյունքում,

է) Պայմանագրում նշված ԱՄ-ն ապահովագրական պատահարից առաջ շահագործվել է անսարք վիճակում, ունեցել է թերություններ, որոնց պատճառով տեղի է ունեցել պատահարը,

ը) Պայմանագրում նշված ԱՄ-ն շահագործվել է ոչ Ապահովադրի (Ապահովագրված անձի) կողմից կամ օրինական հիմքերի բացակայության պայմաններում (վարորդը չի ունեցել վարորդական իրավունք կամ օրենսդրությամբ պահանջվող այլ փաստաթուղթ կամ ԱՄ-ի շահագործումն արգելված է օրենսդրությամբ),

թ) Պայմանագրում նշված ԱՄ-ն շահագործվել է այն արտադրող գործարանի կողմից սահմանված պահպանման և շահագործման նորմերի և կանոնների խախտմամբ,

ժ) Պայմանագրում նշված ԱՄ-ի վարորդը դիմել է փախուստի կամ ինքնակամ հեռացել է ՃՏՊ-ի վայրից կամ հրաժարվել է ալկոհոլային զննում անցնելուց,

ի) պատահարն առաջացել է Ապահովադրի (Ապահովագրված անձի) դիտավորյալ գործողությունների արդյունքում,

լ) պատահարը տեղի է ունեցել այն գոտիներում, որտեղ պաշտոնապես հայտարարված է արտակարգ իրավիճակ,

խ) պատահար տեղի ունենալու պահին Ապահովադիրը չի ունեցել Ապահովագրողի հետ կնքած և գործող ԱՊՊԱ պայմանագիր,

ծ) Պայմանագիրը կնքելիս ակնհայտ սուտ տեղեկություններ է հայտնել Ապահովագրողին՝ ապահովագրության ռիսկայնության աստիճանը որոշելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ, եթե այդ հանգամանքները հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել Ապահովագրողին մինչև ապահովագրական պատահարի տեղի ունենալը,

կ) Ապահովադիրը չի կատարել Պայմաններով և/կամ Պայմանագրով նախատեսված իր պարտականությունները,

հ) Պայմաններով և/կամ Պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

8.2.4. Եթե ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության գծով ապահովագրական հատուցման վճարումն ԱՊՊԱ օրենսդրության համաձայն Ապահովագրողի կողմից ենթակա է մերժման և/կամ ԱՊՊԱ օրենսդրությամբ Ապահովագրողն Ապահովադրի/Լիազորված վարորդի նկատմամբ ձեռք է բերել հետադարձ պահանջի իրավունք, ապա տվյալ իրադարձությունը Պայմանագրով հատուցման ենթակա չէ:

8.2.5. Ապահովագրողի կողմից հատուցման ենթակա չեն բարոյական վնասը, բաց թողնված օգուտը, պարապուրդը, կորցրած աշխատավարձը (եկամուտը), այլ անուղղակի և առևտրային կորուստները, վնասները և ծախսերը, օրինակ՝ տուգանքներ, ապահովագրական պատահարի կարգավորման ընթացքում հյուրանոցում բնակվելը, գործուղման ծախսերը, հեռախոսային խոսակցությունները, ապրանքների մատակարարման և ծառայությունների տրամադրման ժամկետների խախտման հետ կապված կորուստները և այլն:

8.3. Ապահովագրական հատուցման վճարման ընթացակարգը

8.3.1. Տուժողի գույքին պատճառված վնասները հատուցվում են Տուժողին (նրա ներկայացուցչին կամ ժառանգին) ՀՀ դրամով համապատասխան գումար վճարելու ձևով, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ կամ պատճառված վնասի վերականգնման (վերանորոգման) միջոցով՝ գույքին պատճառված վնասների հատուցման գծով ԱՊՊԱ օրենսդրությամբ սահմանված տրամաբանությամբ:

8.3.2. Կատարված վերանորոգման աշխատանքների որակի համար Ապահովագրողը պատասխանատվություն չի կրում:

8.3.3. Տուժողի առողջությանը պատճառված վնասների գծով Ապահովագրողի կողմից հատուցվում են Տուժողի առողջությունը վերականգնելու նպատակով կատարվող բժշկական ծախսերը:

8.3.4. Տուժողի առողջությանը պատճառված վնասի համար ապահովագրական հատուցումը վճարվում է անմիջապես բժշկական հաստատությանը՝ բացառությամբ հետևյալ ծախսերի գծով հատուցումների դեպքերի.

ա) բժշկի ցուցումով բուժման շարունակականության ապահովմանն ուղղված միջոցառումների, դեղեր ձեռք բերելու, պրոթեզավորման, անվասայլակի, տեխնիկական այլ միջոցների ձեռքբերման հետ կապված ծախսերը,

բ) Տուժողի առողջության վերականգնման համար Տուժողի կամ այլ անձի կողմից արդեն իսկ կատարված ծախսերը, եթե Տուժողը կամ վճարումն իրականացնող անձը հիմնավորում են իրենց կողմից վճարման իրականացման անհրաժեշտությունը:

ԳԼՈՒԽ 9. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԻ ԱՍՏԻՃԱՆԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

9.1. Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողին անհապաղ հայտնել Պայմանագիրը կնքելիս Ապահովագրողին հայտնած հանգամանքների՝ իրեն հայտնի դարձած փոփոխությունների մասին, եթե փոփոխությունները կարող են որակապես ազդել ապահովագրական ռիսկի մեծանալու կամ նվազելու վրա:

9.2. Ապահովագրական ռիսկի մեծացումն առաջացնող հանգամանքների մասին տեղեկացված Ապահովագրողն իրավունք ունի պահանջելու փոփոխել Պայմանագրի պայմանները կամ վճարելու ռիսկի մեծանալուն համաչափ լրացուցիչ ապահովագրավճար:

9.3. Եթե Ապահովադիրն առարկում է Պայմանագրի պայմանների փոփոխությունը և/կամ լրացուցիչ ապահովագրավճարի վճարումը, Ապահովագրողն իրավունք ունի պահանջել լուծել Պայմանագիրը և հատուցել Պայմանագրի լուծմամբ իրեն պատճառված վնասները:

ԳԼՈՒԽ 10. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

10.1. Պայմանների համաձայն կնքված Պայմանագրից բխող վեճերը կարգավորվում են բանակցությունների միջոցով:

10.2. Բանակցությունների արդյունքում համաձայնության չգալու դեպքում վեճերը լուծվում են Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համաձայն կամ դատական կարգով՝ ՀՀ օրենսդրության համաձայն:

10.3 Վիճելի հարցեր լուծելու դեպքում Պայմանագրի դրույթները գերակայող ուժ ունեն Պայմանների նկատմամբ:

10.4. Վիճելի հարցեր լուծելու դեպքում Ծրագրի դրույթները գերակայող ուժ ունեն Պայմանների նկատմամբ:

10.5. Վիճելի հարցեր լուծելու դեպքում, եթե Պայմաններով Ծրագրի դրույթների վերաբերյալ նախատեսված է առավել մանրամասն նկարագրություն, կիրառվում են Պայմանների և Ծրագրի դրույթները միաժամանակ: